ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ

ՄԱՐՈՒԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Թավշյա հեղափոխությունը բարձրացրեց Հայաստանի Հանրապետության միջազգային վարկանիշը: «Time» ամսագիրը Ն. Փաշինյանին որակեց որպես «ժողովրդավարության խաչակիր»[1], իսկ բրիտանական «The Economist» -ը Հայաստանը հռչակեց տարվա երկիր[2]: Սակայն նրանց այն ակնկալիքները, որ ՀՀ-ն կներմուծի արևմտյան արժեհամակարգ, կամրապնդի և կընդլայնի համագործակցությունը Միացյալ Նահանգների ու Եվրոպական միության հետ, չարդարացան, քանի որ նոր իշխանությունները սկզբից ևեթ հայտարարեցին, որ արտաքին քաղաքականության հայեցակարգում չեն նախատեսում շեշտակի փոփոխություններ:

2019 թ. փետրվարի 14-ին ՀՀ Ազգային ժողովը (ԱԺ) ընդունեց կառավարության ծրագիրը, որի արտաքին քաղաքականությանը վերաբերող հատվածում առաջնահերթություն էին հռչակվում Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) հետ ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների հետագա զարգացումն ու խորացումը: Այս սկզբունքը Հայաստանի իշխանությունները համարում էին երկրի անվտանգության ապահովման համակարգի կարևոր բաղկացուցիչ[3]:

Թեև այս փաստաթղթով նախատեսվում էր նաև համագործակցության ընդլայնում ԱՄՆ-ի, ԵՄ-ի և արևմտյան այլ երկրների ու կառույցների հետ, այնուամենայնիվ արևմտյան բազմաթիվ վերլուծաբաններ ՀՀ արտաքին քաղաքականությունը բնութագրեցին որպես միավեկտոր:

Վերջին շրջանում ռուս-հայկական հարաբերություններում նկատվում են որոշ տարաձայնություններ և թյուրըմբռնումներ, որոնք ունեն ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ պատճառներ: ՌԴ-ՀՀ հարաբերությունները հնարավոր է օբյեկտիվ և ոչ զգացմունքային լուսաբանել միայն հարցերի առավել լայն ընդգրկմամբ՝ աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում:

Արդի միջազգային հարաբերությունները, ի տարբերություն երկբևեռ կամ միաբևեռ աշխարհակարգի, առավել բազմաշերտ են ու բարդ:

---

[1] https://rusarminfo.ru/2018/07/12/zhurnal-time_nazvalpremera-armenii-krestanoscem-demokratii

[2] Տե՛ս www.komersant.ru/doc/3849632 մուտքը՝ 09.01.2019:

[3] «Կառավարությունը հրապարակել է արտաքին քաղաքականության ծրագիր» // www.lragir.am/2019/02/10614154301:

Աշխարհաքաղաքական նման հարահոս փոփոխությունների հորձանուտում տնտեսական համակողմանի զարգացումն ապահովելու, ինչպես նաև անմիջական հարևանների, ռազմավարական դաշնակիցների և համաշխարհային ուժային կենտրոնների հետ հարաբերություններում հավասարակշռություն պահպանելու համար անհրաժեշտ է մշակել նոր մոտեցումներ և ցուցաբերել հմտություններ:

Ժամանակակից աշխարհի երեք հիմնական բնութագրիչներն են բազմաբևեռայնությունը, գաղափարական ճգնաժամը և տեխնոլոգիական նոր կացութաձևի անցնելու գործընթացները: Գաղափարախոսական և արժեքային համակարգի խորը ճգնաժամը իր ազդեցությունն է թողել ինչպես լիբերալիզմի, այնպես էլ գերազանցապես հակաարևմտյան հենքի վրա կառուցված ռուսական պահպանողականության վրա: Բազմաբևեռ աշխարհակարգում համաշխարհային ուժային կենտրոնների իռացիոնալ քաղաքականությունը պետությունների տնտեսական և տեխնոլոգիական անհամաչափ զարգացման պայմաններում կարող է առաջացնել քաոս, խարխլել նրանց միջև արդեն ձևավորված փոխհարաբերությունները:

Այսօր միջազգային ասպարեզում ԱՄՆ-ից բացի, միայն ՌԴ-ն է, որ բացահայտ հայտարարում է իր աշխարհաքաղաքական նկրտումների մասին: Արևմուտքի դեմ օգտագործելով իր էներգետիկ լծակներն ու ինտեգրացիոն նախաձեռնությունները՝ Ռուսաստանը ակտիվորեն ներքաշվել է նաև խորհրդային ժառանգության համար մղվող պայքարում: Այդ մասին են վկայում պատերազմը Վրաստանի հետ, Ղրիմի միացումը և իրադարձությունները Արևելյան Ուկրաինայի հարավարևելյան շրջաններում: Եթե ավելացնենք 2016 թ. ԱՄՆ-ի նախագահական ընտրություններին միջամտելու և Սկրիպալների ընտանիքին թունավորելու մեղադրանքները, ապա հասկանալի կլինի, որ Արևմուտքի և ՌԴ-ի միջև տարաձայնությունները մոտակա ժամանակներում չեն հաղթահարվի, հետևաբար Կրեմլը հարմարվելու է աշխարհաքաղաքական նման բարդ միջավայրում երկարատև պայքարի մարտավարությանը: Հակառուսական պատժամիջոցներին միացել են բազմաթիվ պետություններ:

Մինչև ուկրաինական իրադարձությունները անհաջողության մատնվեց ՌԴ-ի՝ «Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ» աշխարհաքաղաքական նախագիծը: «Մեծ Եվրոպայի» տեսլականը տապալվեց ոչ միայն եվրոպական առանցքային պետություններում, այլև, որ ավելի կարևոր է, Եվրոպայի ու Ռուսաստանի միջև շփումներում, որի պատճառը քաղաքակրթական ու արժեքային համակարգի որակական տարբերությունն էր: Ռուսաստանի համար աշխարհաքաղաքական մյուս բացասական գործընթացը «խորհրդային կայսրության» փլուզման անշրջելի գործընթացն էր և հատկապես ռուսական պետության «պատմական միջուկի» տրոհվելը: Դեռևս 1997 թ. Զ. Բժեզինսկին նշել է, որ Ուկրաինայի անկախացումը միլիոնավոր ռուսաստանցիների ստի-

պեց վերաիմաստավորել իրենց քաղաքական և էթնիկ պատկանելությունը: Նա նշում է նաև, որ դա Ռուսաստանի աշխարհաքաղաքական ամենամեծ անհաջողությունն էր և դրանով սահմանափակվեց նրա աշխարհառազմավարական ընտրությունը, քանի որ առանց Ուկրաինայի մասնակցության անհաջողության են դատապարտված Եվրասիական կայսրության վերականգնման Մոսկվայի բոլոր փորձերը[4]: Արևմուտքի օժանդակությամբ Ուկրաինան 2014 թ.-ից փորձեց արմատապես հեռանալ Ռուսաստանից, իսկ Մոսկվայի պատասխան ուժային անդրադարձը ոչ միայն վերջնականապես վատթարացրեց ռուս-ուկրաինական հարաբերությունները, այլև Կրեմլի նկատմամբ զգուշավորություն առաջացրեց նրա հետ ինտեգրացիոն նախագծերում ընդգրկված այլ երկրների մեջ:

Այսպիսով, Ռուսաստանի համար «հետխորհրդային տարածք» աշխարհաքաղաքական հասկացությունը մնաց անցյալում: Հետխորհրդային երկրների համար իրենց անցյալը այլևս որոշիչ գործոն չէր, իսկ զարգացման ուղիները ոչ միշտ էին զուգորդվում: Նորանկախ այդ պետությունները աստիճանաբար հայտնվում էին համագործակցության տարբեր ձևաչափերում, որտեղ ՌԴ-ն միշտ չէ, որ որոշիչ դեր ուներ: Օրինակ՝ Կենտրոնական Ասիայում աստիճանաբար իր ներկայությունն է մեծացնում Չինաստանը, ձևավորվել են եռակողմ համագործակցություններ՝ Մոսկվա-Բաքու-Թեհրան, Մոսկվա-Բաքու-Անկարա, Անկարա-Բաքու-Նուրսուլթան, Անկարա-Բաքու-Թբիլիսի ձևաչափերով: Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական մերձավորագույն գործընկերներ Բելառուսը և Հայաստանը իրենց հերթին փորձում են կառուցողական հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՉԺՀ-ի հետ: Ուկրաինան, Վրաստանը և Մոլդովան, որոնք ԵՄ-ի հետ կնքել են ասոցացման պայմանագրեր, կրում են ՌԴ-ի հետ հակամարտության ողջ ծանրությունը: Հետխորհրդային տարածքը վերածվել է ՌԴ-ի և Արևմուտքի միջև պայքարի թատերաբեմի, որտեղ ոչ մեկը վերջնական գերակշռություն չի ստացել:

Այսպիսով, աշխարհաքաղաքական անբարենպաստ զարգացումների հետևանքով Ռուսաստանի և հետխորհրդային մի շարք երկրների միջև ձևավորվել են թշնամական (Մերձբալթյան երկրներ, Ուկրաինա, Վրաստան), մի մասի հետ էլ ինտեգրացիոն գործընթացներ (Ղազախստան, Բելառուս, Հայաստան, Տաջիկստան, Ղրղզստան), իսկ մի շարք պետությունների միջև հաստատվել է պրագմատիկ համագործակցություն (Ադրբեջան, Ուզբեկստան, Թուրքմենստան): ՌԴ-ի աշխարհաքաղաքական կարգավիճակը վերջին հարյուրամյակի համեմատ զգալիորեն ցածր է: ԱՊՀ և ԵԱՏՄ երկրներից ոչ մեկն առ այսօր պաշտոնապես չի ճանաչել Ղրիմի նոր կարգավիճակը: Այլևս չլինելով Մեծ

[4] Տե՛ս **Бжезинский З**. Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы. М., 1999, էջ 114:

Եվրոպայի առանցքը և Արևմուտքն ու Արևելքը կամրջող գործոն՝ Ռուսաստանը աշխարհաքաղաքական առումով դեռևս կարևոր դերակատարում ունի: Նա շարունակում է մնալ աշխարհի այն եզակի երկրներից մեկը, որը սկզբունքորեն չի ընդունում որևէ այլ գերտերության հեգեմոնիան, և որի հասարակությունը հանուն իր ինքնիշխանության պահպանման ու քաղաքական անկախության պատրաստ է որոշակի զոհաբերությունների՝ ի հաշիվ իր տնտեսական բարեկեցության:

ՌԴ ներկայիս ղեկավարությունը կարծում է, որ ՌԴ հետագա կարգավիճակը այսօր հիմնականում որոշվում է երկրի ներսում: Տնտեսության, գիտության, սոցիալական և մշակութային ոլորտների զարգացումը այն գրավականն է, որը Ռուսաստանին հնարավորություն կտա այսուհետև ևս պահպանելու աշխարհաքաղաքական բավական հեղհեղուկ հավասարակշռությունը: Այսինքն՝ Մոսկվայի համար օրակարգային է երկրի քաղաքական ու տնտեսական համակարգի արդիականացումը: Ռուսական քաղաքական էլիտայի համար 21-րդ դարում Եվրոպան և ԱՄՆ-ն այլևս ներշնչման աղբյուր չեն, իսկ արտաքին քաղաքականության առաջնահերթություն է հռչակվել ինքնիշխանությունը, որը ինչ-որ առումով ենթադրում է «միայնություն»:

Այսօր Ռուսաստանին անհրաժեշտ է նաև կայունություն: Վ. Պուտինը, որը քաղաքական վառ գործիչ է և իր կառավարման սկզբնական շրջանում կրկնապատկեց պետության ՀՆԱ-ն, հետևողականորեն փորձում էր արձագանքել երկրի բնակչության սպասումներին ու կարիքներին: Ներկայումս իրավիճակը փոքր-ինչ այլ է: Անշուշտ, բնակչության տրամադրությունների վրա հոգեբանական որոշակի ազդեցություն ունեցավ կենսամակարդակի վատացումը: 2019 թ. հունվարին «Լևադա» կենտրոնը ռուսաստանցիների շրջանում անցկացրեց հարցումներ, որոնք իշխանությունների համար արձանագրեցին վերջին 12 տարում ամենավատ ցուցանիշը[5]: Այսպես, հարցումներին մասնակցած քաղաքացիների 45 տոկոսը գտնում էր, որ երկիրը ճիշտ ուղով չի ընթանում: Հակառակ տեսակետն ուներ բնակչության 42 տոկոսը, իսկ կառավարության գործելակերպից դժգոհ էր հարցվածների 66 տոկոսը[6]: 2019 թ. փետրվարի 20-ին ՌԴ Դաշնային ժողովին ՌԴ նախագահ Վ. Պուտինի ուղերձի դիտումը իր ժողովրդավարության ցուցանիշներով վերջին հինգ տարվա ընթացքում ամենացածրն էր: Այն դիտել է մոսկվացիների միայն 5,9 տոկոսը[7]:

Ստեղծված իրավիճակում պատահական չէր Վ. Պուտինի օգնական Վ. Սուրկովի՝ «Պուտինի երկարատև պետությունը» խորագրով

---

[5] Տե՛ս **Станова Т**. Не знаю и не понимаю: что не так с Путиным? // htpps://carnegie.ru/commentary/62311

[6] Տե՛ս Почти половина россиян сочла неверным путь, по которому движется страна // https: //www.interfax.ru/Russia/648647

[7] «ՌԴ Դաշնային ժողովին Պուտինի ուղերձը հեռուստավարկանիշի անկում է արձանագրել». https://168.am/2019/02/22/1085406.html

հոդվածի հրապարակումը, որը միանշանակ չընդունվեց ռուսաստանյան հասարակության շրջանում: Հոդվածի հիմնական միտքն այն է, որ ՌԴ-ն ընտրության հնարավորություն չունի, արևմտյան ժողովրդավարությունը լոկ պատրանք է միայն դրանից հրաժարվելով է հնարավոր ինքնուրույն և ինքնիշխան շարժվել ժողովրդավարության ուղով: Այնուհետև հեղինակը ՌԴ ռազմաքաղաքական որոշիչ գործոնները պայմանավորում է ներքին լարվածության բարձր աստիճանով և աշխարհաքաղաքական պայքարով: Առաջ է քաշվում «խորքային ժողովուրդ» հասկացությունը. ռուսական պետության ժամանակակից մոդելը հենվում է վստահության վրա, իսկ ռուսաստանյան հասարակությունը հավատում է երկրի առաջին դեմքին[8]:

Կրեմլին մոտ կանգնած վերլուծաբան-փորձագետները գտնում են, որ աշխարհաքաղաքական նման բարդ իրավիճակում ավելանալու են սադրանքները, ՆԱՏՕ-ի, ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի շրջանակներում թուլանալու է դաշնակցային պարտավորությունները կատարելու կարգապահությունը[9]:

Ռուսաստանի համար ներքին և արտաքին հակասական պայմաններում տեղի է ունենում հայկական թավշյա հեղափոխությունը: Ռուսաստանյան բազմաշերտ քաղաքական դաշտը միանշանակ չընդունեց այն: Տրվեցին իրարամերժ գնահատականներ և որակումներ: Մոսկվայի անհանգստությունը միանգամայն հասկանալի էր, քանի որ ինչպես Հարավային Կովկասում, այնպես էլ Հայաստանում ՌԴ-ն կենսական շահեր ունի: Կրեմլի համար «օրինաչափ» չէր Ն. Փաշինյանի կողմից իշխանության ստանձնումը, քանի որ ինչպես ՀՀ նախկին իշխանությունները, այնպես էլ ռուսատանյան իշխանամերձ քաղաքական շրջանակները հավաստիացնում էին, որ իրավիճակը ՀՀ-ում լիովին վերահսկելի է, և սահմանադրական բարեփոխումները հաջողությամբ կիրականացվեն: Սակայն տեղի ունեցավ ճիշտ հակառակը: Իրենց այդ բացթողումը քողարկելու համար նրանք հեղափոխությունը որակեցին «գունավոր», իբր այն հնարավոր չէր իրականացնել առանց արտաքին գործոնի և ոչ կառավարական կազմակերպությունների միջամտության, որ հայկական հեղափոխության թիկունքում եղել են արտաքին ուժեր, և այն «աշխարհաքաղաքական դավադրություն» էր: Մոսկվան վերապահումով և անվստահությամբ էր վերաբերվում Ն. Փաշինյանի այն հավաստիացումներին, որ ՀՀ արտաքին քաղաքականության վեկտորը չի փոխվելու: Այդ հավաստիացումները Կրեմլի համար «համոզիչ» չէին մի քանի պատճառով:

Նախ և առաջ Ռուսաստանի քաղաքական շրջանակներում գտնում էին, որ «փողոցի» միջոցով իշխանության եկած քաղաքական

---

[8] Տե՛ս **Сурков В.** Долгое государство Путина // www.ng.ru/ideas/2019-02-011/5_7503_surkov.html

[9] Տե՛ս «Прогноз, Международные угрозы 2019» // Ежегодный прогноз консалтингового агенства. «Евразийские стратегии» / Eurasian-strategies.ru/media/insights/prognoz-mezhdunarodnye-ugrozy-2019/

գործիչը պետք է հակոտնյա լինի եվրասիական քաղաքական մշակույթին, իսկ հեղափոխության օրակարգը հեռացնելու է Հայաստանը Ռուսաստանից և ԵԱՏՄ-ից:

Ռուսական քաղաքական էլիտային անհանգստացնում է նաև Ն. Փաշինյանի «շրջապատը»: ՀՀ կառավարություն և օրենսդիր մարմին են անցել Ն. Փաշինյանի բազմաթիվ կողմնակիցներ, որոնք ոչ պետական, հասարակական կազմակերպություններում և արևմտյան ծրագրերում աշխատելու մեծ փորձ ունեն: Այս կապակցությամբ Ն. Փաշինյանը նշում է, որ ժողովրդական հեղափոխության միջոցով իշխանության եկած մարդիկ եղել են քաղաքական ընդդիմություն, չեն համագործակցել իշխանությունների հետ և շատ դեպքերում ստիպված են եղել տեղափոխվելու հասարակական սեկտոր, որը ֆինանսավորվել է միջազգային այնպիսի կազմակերպություններից, որոնք լավ չեն ընդունվում Ռուսաստանում: Հեղափոխության առաջնորդի կարծիքով, որ Ռուսաստանում նման պաշտոնյաների նկատմամբ անվստահությունը ժամանակի ընթացքում կհաղթահարվի, երբ փոխադարձ շփումների ընթացքում նրանք համոզվեն, որ գործ ունեն ինքնիշխան երկրի ինքնիշխան պաշտոնյաների հետ[10]:

Միաժամանակ ՌԴ-ում գտնում են, որ ՀՀ քաղաքական համակարգը դեռևս անկայուն է, քանի որ հայ հասարակությունը ավելի շատ վստահում է ոչ թե քաղաքական կուսակցություններին, այլ առանձին գործիչների, որոնց նկատմամբ անվստահությունը կարող է քաղաքական անկայունության հանգեցնել: Ռուսաստանում կարծում են, որ Ն. Փաշինյանի կառավարությունում առաջնայինը ներքին քաղաքականությունն է, իսկ արտաքինը «պատանդի» կարգավիճակում է: Հետևաբար անհանգստացած են, որ ՀՀ-ն արտաքին թատերաբեմում ոչ միշտ կարող է վստահելի գործընկեր լինել և Ռուսաստանի համար կարող է խնդիրներ առաջացնել ԵԱՀԿ Մինսկի խմբում, ՀԱՊԿ-ում, ԵԱՏՄ-ում և այլն: Հանուն արդարության պետք է ասել, որ սկզբնական շրջանում ՀՀ իշխանությունները, ավելորդ հեղափոխականություն դրսևորելով, դիմեցին ռիսկային քայլերի, որոնք տարակուսանքով ընկալվեցին ոչ միայն Ռուսաստանում՝ մարտի 1-ի գործով ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի դեմ մեղադրանք առաջադրելը, ՀՀ երկրորդ նախագահի ձերբակալությունը, ֆինանսական ստուգումները «Գազպրոմ-Արմենիայում» և «Ռուսական երկաթուղու» դուստր ընկերություն «Հարավկովկասյան երկաթուղում»: «Բարձրավոլտ էլեկտրացանցերը» «Տաշիր կապիտալին» հավատարմագրված կառավարման հանձնելու գործարքի սառեցումը առաջ բերեց նաև ներդրումային կլիմայի փոփոխություն: Սակայն տարաձայնություններն ըստ էության չանդրադարձան ռուս-հայկական հարաբերությունների որակական կողմի վրա, և

[10] Տե՛ս «Մեկ տարի անց. բացառիկ հարցազրույց Ն. Փաշինյանի հետ». https://hy-am.facebook.com/civilcontractarmenia/posts/Նիկոլ-Փաշինյանի-հարցազրույցը-սիվիլնեթին/902788843105649/:

մեկ տարվա ընթացքում ՀՀ իշխանության քայլերը դա են վկայում:

Ստեղծված աշխարհաքաղաքական նոր միջավայրում ռուս-հայկական հարաբերությունները արդյո՞ք ռազմավարական վերանայման անհրաժեշտություն ունեն: Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանը կարիք ունի՞ մեծացնելու իր սուբյեկտությունն ու ինքնիշխանությունը, և ինչքանով է դա ներդաշնակ ռուս-հայկական ռազմավարական համագործակցությանը և ՌԴ-ի առջև ծառացած արդի աշխարհաքաղաքական մարտահրավերներին: 2019 թ. ապրիլի 26-ին Պեկինում կայացած միջազգային համաժողովում Վ. Պուտինը հայտարարեց, որ իր եվրասիական գործընկերներ Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հետ հարաբերությունները կառուցվում են նրանց ինքնիշխանության, իրավունքների և օրինական շահերի հարգման սկզբունքով[11]:

Անցած 28 տարիներին լեգիտիմության ոչ անհրաժեշտ պաշար ունեցող ՀՀ նախկին իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով Կրեմլում կարծրացել է այն պատկերացումը, որ ՌԴ պետական շահերը ենթադրում են, որ Երևանը անվերապահորեն ու անտրտունջ պետք է հնազանդվի Մոսկվային: Սակայն շատ կարևոր է, որ ռուս-հայկական հարաբերություններում առկա խնդիրները բարձրաձայնվեն և լուծումներ ստանան՝ դրանով իսկ կանխելով երրորդ ուժի մանևրի հնարավորությունները: ԽՍՀՄ-ին հաջորդած տասնամյակներին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում աճել է մի սերունդ, որը չունի գաղափարական ու քաղաքակրթական այն միասնական հենքը, ինչն առկա էր Խորհրդային Միությունում: Տասնամյակներ շարունակ ՌԴ-ն, իր համար կարևոր առաջնահերթություն հռչակելով անմիջական հարևանների հետ հարաբերությունների զարգացումը, իրականում հակված էր դեպի Արևմուտք: Այդ իսկ պատճառով Մոսկվան, ռուս-հայկական հարաբերությունները համակողմանի զարգացնելու համար լիարժեք չօգտագործելով իր ամբողջ հնարավորություններն ու ներուժը, մտածում էր, որ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում հայտնված Հայաստանը «փախչելու տեղ չունի»: Նման մարտավարությամբ ՌԴ-ն ինքն է համաշխարհային ու տարածաշրջանային կենտրոններին մղել առավել ակտիվ գործողությունների: Շատ հաճախ հետխորհրդային տարածքում իրենց անհաջողությունները Մոսկվան փորձում է վերագրել ԱՄՆ-ի կամ ԵՄ-ի «խարդավանքներին»: Արևմտյան որևէ քաղաքական գործչի տարածաշրջան այցից հետո Մոսկվան կասկածամիտ է դառնում՝ դաշնակիցներին մեղադրելով «դավաճանության» մեջ: Նման վարքագծով ՌԴ-ն շատ հաճախ ուղղակի գործում է Վաշինգտոնի և Բրյուսելի օգտին: Բացի այն բանից, որ ՌԴ և ՀՀ ներկայիս իշխանությունները քաղաքական տարբեր սերունդների ներկայացիչներ են, որոնց միջև կարող են ծագել նաև

[11] «С Арменией и другими странами союз строится на уважвнии суверенитета: Путин» // 9https://rusarminfo.ru/2019/04/26/s-armeniej-i-orugimi-stranami-soyz-stroitsya-na-uvazhenii-suvereniteta-putin/

հաղորդակցական խնդիրներ, ձևավորված իրողություն է՝ ռուսաստանյան երիտասարդության շրջանում Հայաստանը ընկալվում է որպես հարավկովկասյան պետություններից մեկը, իսկ հայ երիտասարդության շրջանում Ռուսաստանը՝ որպես եվրոպական երկրներից մեկը: Մոսկվայում առանձնակի ոգևորությամբ չի ընդունվում նաև Ն. Փաշինյանի որդեգրած պայքարը կոռուպցիայի, օլիգարխիայի և մենաշնորհների դեմ: ՀՀ ներկայիս ղեկավարությունը զգում է Ռուսաստանի այդ մտահոգությունները և իրենից կախված ամեն ինչ անում է դրանք հաղթահարելու համար: Առաջին իսկ օրվանից ՀՀ նորընտիր բոլոր պաշտոնատար անձինք և Ն. Փաշինյանը բազմիցս հավաստիացրել են, որ Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական դաշնակիցն է: Օրինակ՝ 2018 թ. դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ում Ղրիմի վերաբերյալ հակառուսական բանաձևի դեմ քվեարկեցին միայն Հայաստանն ու Բելառուսը[12]: Այնուհետև՝ ՀԱՊԿ երկրներից միայն Հայաստանը արձագանքեց ՌԴ կոչին և մարդասիրական առաքելություն իրականացրեց Սիրիայում: ՀՀ նորընտիր Ազգային ժողովում կարևորելով նախ և առաջ ռուս-հայկական հարաբերությունները՝ առաջին անգամ ստեղծվեց Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով, որի հիմնական առաքելությունը ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների հետ օրենսդրության ներդաշնակեցումն ու միասնականացումն է: Արդեն կայացել են ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի համատեղ նիստը և այլ միջոցառումներ: 2019 թ. ապրիլի 23-ին Ազգային ժողովի բակում պատգամավորները հիմնեցին Հայ-ռուսական բարեկամության ծառուղի: Այդ կապակցությամբ ՀՀ ԱԺ նախագահ Ա. Միրզոյանը նշեց, որ երկու երկրների ժողովուրդների բարեկամությունը բազմադարյա պատմություն ունի և խարսխված է փոխադարձ համակրանքի ու հարգանքի վրա[13]:

Այսօր ռուսաստանյան և հայկական ԶԼՄ-ում կարելի է հանդիպել ոչ կոռեկտ և սխալ մի հարցադրման՝ ո՞ւմ է ավելի անհրաժեշտ ռուս-հայկական համագործակցությունը: Մենք չենք անդրադառնալու այդ փաստարկներին և նման հարցադրման պատասխանը կձևակերպենք հետևյալ կերպ. ռուս-հայկական ռազմավարական և դաշնակցային գործընկերությունը այլընտրանք չունի ո՛չ Ռուսաստանի և ո՛չ էլ Հայաստանի համար: Ռուս-հայկական հարաբերությունների վատթարացումը միջազգային ասպարեզում և տարածաշրջանում թուլացնելու է երկու պետությունների դիրքերը՝ նրանց ավելի խոցելի դարձնելով արտաքին մարտահրավերների նկատմամբ:

---

[12] Տե՛ս «Генассамблея ООН одобрила резолюцию по Крыму, называющую Россию «оккупирующей державой» // https://tass.ru/mezhdunarodnaya-ponarama/4826367

[13] «Ազգային ժողովի բակում պատգամավորները Հայ-ռուսական բարեկամության ծառուղի հիմնեցին». https:// www lragir.am/2019/04/23/437586/

Ժամանակին ուղղափառ Բյուզանդիան թուլացրեց և կործանեց Բագրատունյաց Հայաստանը և հետևանքը այն եղավ, որ նրա արևելյան սահմանները անպաշտպան մնացին, և նա վարձահատույց եղավ իր պետականությամբ: Ելնելով ոչ թե ռազմավարական, այլ պահի նպատակահարմարությունից՝ Թուրքիային հերթական անգամ փրկեց բոլշևիկյան Ռուսաստանը: Քեմալա-բոլշևիկյան կարճատև համագործակցությունը տեղի ունեցավ ի հաշիվ հայերի, որից շահեց միայն Թուրքիան: 1994 թ. ադրբեջանցիների խնդրանքով Ռուսաստանը համոզեց հայերին զինադադար կնքել, և Բաքուն պահպանեց ռազմավարական որոշ դիվիդենտներ: Ներկայումս ՀՀ թուլացումը կամ Արցախի կորուստը ձևավորելու է ՌԴ-ի համար ամենախոցելի՝ Թուրքիա-Ադրբեջան-Թուրքմենստան-Ղազախստան-Ղրղզստան հարավային հատվածի առանցքը, որին ձգտելու են միանալ ինչպես Թաթարստանը, Բաշկորտոստանը, Ուդմուրտիան, այնպես էլ հյուսիսկովկասյան հանրապետությունները: Եթե Մոսկվայում մի ակնթարթ հայացքները երկու հարյուր տարով դեպի անցյալ ուղղեն, ապա դժվար թե Ռուսաստանում գտնեն որևէ այլ ազգություն, որը նման անձնուրացությամբ նպաստել է այդ երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային առաջընթացին ու զարգացմանը, նոր տարածքների յուրացմանը: Իսկ խորհրդային տարիներին նման մղումներ պահպանվեցին ոչ միայն ԽՍՀՄ-ում բնակվող հայերի, այլև հայկական սփյուռքի շրջանում: Եվ պատճառը ոչ միայն «աշխարհաքաղաքական ընտրությունն» է, այլև այն ունի խորքային և քաղաքակրթական բացատրություն: Ի տարբերություն ՌԴ այլ ազգային փոքրամասնությունների՝ հայերը պատմական հիշողությամբ դիտարկում են Ռուսաստանը հույն-հայկական Բյուզանդիայի ժառանգորդ: Հայերը դարերի ընթացքում, շնորհիվ իրենց տնտեսական ակտիվության, կրթական բարձր ցենզի և աշխատասիրության, սահուն ինտեգրվեցին ռուսական կայսրությունում: Դա էր պատճառը, որ պատմամշակութային գենետիկ հիշողությամբ հայերը հարյուրամյակներ ի վեր իրենց լուման ունեցան ինչպես ռուսական կայսրության, այնպես էլ ԽՍՀՄ զարգացման գործում:

Ռուսաստանի համար ինքնիշխան և ուժեղ գործընկեր Հայաստանի օրինակներից է ՌԴ լոգիստիկ օժանդակությամբ Սիրիայում հայկական հումանիտար առաքելության իրականացումը: Գիտակցելով, թե ինչպիսի բացասական արձագանք կարող է լինել Վաշինգտոնից և Բրյուսելից, այնուամենայնիվ Հայաստանը Մոսկվայի միակ գործընկերն էր, որ դիմեց այդ քայլին: Դա միանշանակ չընկալվեց նաև Հայաստանում: Շատերը Երևանի այդ որոշումը համարեցին Մոսկվային սիրաշահելու քայլ կամ որոշում, որը ընդունվել է Կրեմլի ճնշումների ներքո: Սակայն եթե այդ ձեռնարկը դիտարկենք նաև աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, միանգամայն այլ պատկեր կստանանք: 2018 թ. դեկտեմբերին ԱՄՆ նախագահ Դ. Թրամփը որոշեց

Սիրիայից ամերիկյան զորքերը դուրս բերել, որը նրա ընդդիմախոսները գնահատեցին որպես «նվեր» Ռուսաստանին և Թուրքիային: Դեռևս 1919 թ. Թուրքիայում ընդունված Ազգային ուխտի համաձայն՝ սիրիական Ալեքսանդրեքը՝ Մուսա լեռով, և հայաբնակ Հալեպի շրջանը համարվում էին բուն թուրքական տարածքներ, և Թուրքիայի ռազմական գործողությունները Սիրիայի հյուսիսում ամերիկյան զինուժի առկայությամբ իրատեսական չէին: Մյուս կողմից՝ ըստ Սիրիայի հարցով «Աստանայի ձևաչափով» (Ռուսաստան-Թուրքիա-Իրան) ձեռք բերված համաձայնության՝ Թուրքիան կարող էր իր ներկայությունը պահպանել Սիրիայի հյուսիսում մինչև այդ երկրում վերջնականապես իշխանության խնդրի լուծվելը: Ռուսաստանի համար Թուրքիայի դերը ևս կարևորվում է, եթե նկատի ունենանք նրա ազդեցությունը սիրիական ընդդիմության շրջանակներում: Սիրիայում նաև համադրվում են Թուրքիայի, ԱՄՆ-ի և ԵՄ շահերը: Միանգամայն հասկանալի է, որ հայաբնակ շրջաններում 83 մարդուց բաղկացած հայկական մարդասիրական առաքելությունը չի կարող էական ռազմական նշանակություն ունենալ, սակայն Եղեռնից փրկված հայերի համար հարազատ դարձած երկրում հայոց եռագույնի ծածանվելը նախ և առաջ ունի քաղաքական ու հոգեբանական նշանակություն: Անշուշտ ՀՀ-ի տնտեսական ու ռազմական ներուժը չենք կարող համեմատել Իսրայելի հետ, սակայն այդ երկրի օրինակը ևս մեկ անգամ ապացուցում է, որ քաղաքականությունում այնքան էլ կարևոր չէ տարածքով մեծ կամ փոքր պետություն լինելը, էական է այն, թե ինչքանով է տվյալ երկիրը կարողանում համադրել իր հետաքրքրությունները ուժային ու տարածաշրջանային գլոբալ բևեռների հետ և որքանով է առաջնորդվում իր պետական շահերով:

ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանը Մոսկվայի միջազգային անվտանգության հարցերով 8-րդ համաժողովում նշեց, որ միջազգային անվտանգության ապահովման ոլորտներում շահերի և նպատակների համընկնումը ենթադրում է համատեղ գործողություններ ինչպես համաշխարհային և տարածաշրջանային պետությունների, այնպես էլ այնպիսի սահմանափակ ռազմական հնարավորություն ունեցող երկրների կողմից, ինչպիսին Հայաստանն է[14]: Սիրիայում ՀՀ ազգային մարդասիրական առաքելությունը նրա կարծիքով հիմնավորված է Մերձավոր Արևելքում հայկական ներկայության պատմական գործոնով և մեր արմատները Մերձավոր Արևելքում պահպանելու ցանկությամբ՝ հաշվի առնելով վերջին տասը տարվա անկայունության դառը փորձը, ինչի հետևանքը դարձավ Իրաքից հայերի զանգվածային արտագաղթը[15]:

---

[14] Տե՛ս «ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանի ելույթը Մոսկվայի միջազգային անվտանգության հարցերով 8-րդ համաժողովի ընթացքում». https://www.lragir.am/2019/04/25/438363/

[15] Տե՛ս նույն տեղը:

ՀՀ հումանիտար առաքելության շրջանակներում հայ բժիշկները վիրահատել են ավելի քան 100 սիրիացիների, իսկ հայ սակրավորները ականազերծել են ավելի քան 25 հազար քառակուսի մետր տարածք[16]:

ՀՀ հումանիտար առաքելության ներկայացուցչությունը կարևոր գործոն դարձավ, որ Հայոց ցեղասպանության նախօրյակին՝ ապրիլի 23-ին, Ալ-Բաբ սիրիական քաղաքի հայ բնակչությունը կասեցնի թուրք վարձկանների հարձակումը[17]: Մեկ օր անց Սիրիայում հայտարարվեց հայկական ազգային բրիգադ ստեղծելու մասին[18]:

Հայկական թավշյա հեղափոխությունից հետո, ի տարբերություն ՌԴ որոշ քաղաքական շրջանակների ու գերատեսչությունների, ՌԴ և ՀՀ ռազմական նախարարությունների միջև փոխհամագործակցությունը վերընթաց է ապրում: ՀՀ մարդասիրական առաքելության վերաբերյալ ՌԴ պաշտպանության նախարար Ս. Շոյգուն Թուրքիային հակադարձեց, որ հայ զինծառայողները հայտնվել են նրանց ռազմավարական տիրույթում ՌԴ խնդրանքով, և առարկություններ չեն ընդունվում[19]:

ՌԴ Պետդումայի պաշտպանության և անվտանգության գծով կոմիտեի նախագահի տեղակալ Յուրի Շվիտկինը, վերահաստատելով Դ. Տոնոյանի կարծիքը, որ ՌԴ զինված ուժերը և սահմանապահները կարևոր դերակատարում ունեն ՀՀ անվտանգության պահպանման հարցում, հայտարարեց, որ «ռազմական սպառնալիքի դեպքում Ռուսաստանը կապահովի Հայաստանի անվտանգությունը»[20] :

Եթե Սիրիայում հումանիտար առաքելությունը գրեթե աննկատ մնաց ռուսաստանյան կենտրոնական լրատվամիջոցների համար, ապա դրանից 5 օր անց՝ փետրվարի 12-ին, ՌԴ բոլոր հեռուստակայանները միասնաբար, կարծես մեկ հրահանգով, հանկարծ «հիշեցին», որ անցյալ տարի նոյեմբերին Երևանում տեղի է ունեցել թավշյա հեղափոխությանը նվիրված սեմինար, որտեղ ռուսաստանցիներին «ամերիկյան փողերով սովորեցրել են գունավոր հեղափոխության նրբությունները»: Նշենք, որ վերջին մեկ տարվա ընթացքում ՌԴ կենտրոնական լրատվամիջոցները ՀՀ ներքաղաքական իրադարձությունները մեկնաբանում են միակողմանի և խեղաթյուրված, հիմնականում հակահայկական երանգներով:

Ցավալի է, որ հաճախ Հայաստանին վերաբերող ապատեղեկատվություն տարածելիս Մոսկվայում հատուկ ընդգրկում են հայազգի լրագրողների և քաղաքագետերի: Հայաստանը, ի տարբերություն Ուկ-

---

[16] Տե՛ս https://www.newsinfo.am/arm.article/view/VJXxhjGrs8

[17] Տե՛ս «Столкновения между армянами и турецкими наемниками в сирийском Аль-Бабе» // https:/ ?pandukht.livejournal.com/1649459.html?nojs=1

[18] Տե՛ս https://voskanapat.info/?p=35145&=ru

[19] «Փաշինյանի ցատկը Անատոլիայի վրայով: Այսպես կշրջեն գեոպոլիտիկ խաղատախտակը». https//www.lragir.am/2019/02/16/418511/

[20] htpps:// rusarminfo.ru/2018/11/13/rossiay

բաինայի, Վրաստանի, Մոլդովայի և նույնիսկ Բելառուսի, դեռևս ձեռնպահ է մնում ռուսական հեռուստաալիքների լուրերի թողարկումները սահմանափակելուց: Դրա փոխարեն այդ հեռուստաալիքները, օրինակ, չեն լուսաբանում, թե ինչպես «Ռուս-հայկական երիտասարդական միության» ջանքերով հազարավոր «Գեորգիևյան ժապավեններ» են բաժանվել Երևանում: Հիշեցնենք, որ ԱՊՀ բազմաթիվ երկրներում և նույնիսկ եղբայրական Բելառուսում արդեն մի քանի տարի է՝ այդ ժապավենը պաշտոնապես չեն օգտագործում: Մեր կարծիքով՝ ռուսաստանյան որոշ քաղաքական և ֆինանսական շրջանակներ շահագրգռված չեն, որ հայ-ռուսական համագործակցությունը որակապես ավելի զարգանա և Մերձավոր Արևելքում ՀՀ ակտիվությունը մեծանա, ինչպես նաև թուրք-սիրիական սահմանամերձ հատվածում հայ բնակչության ներկայությունը պահպանվի:

Այս հատվածին նույնիսկ չի բավարարում, որ ՀՀ նոր իշխանությունների համար Ռուսաստանի հետ դաշինքը ավելի շատ աշխարհաքաղաքական անհրաժեշտություն է, քան գիտակցված ընտրություն[21]: Ո՞րն է պատճառը, որ ռուսաստանյան որոշ շրջանակների արդեն նույնիսկ չի բավարարում այն, որ ՀՀ նոր իշխանությունները, ըստ իրենց կարծիքի, փորձում են խորացնել հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունը՝ ելման կետ ընդունելով ոչ թե «գիտակցված ընտրությունը», այլ «աշխարհաքաղաքական անհրաժեշտությունը»: «Ռուսական աշխարհը» որպես սլավոն և թյուրք ժողովուրդների միասնություն համարող ռուսաստանյան քաղաքական գործիչների մի մասը Հայաստանը ի վիճակի է դիտարկել միայն որպես Ռուսաստանի «ֆորպոստ»: Այս հատվածը կարծում է, որ ՀՀ նկատմամբ Մոսկվայի ռազմավարական փոփոխությունները կարող են գնահատվել որպես «թուլության» դրսևորում, որը կարող է «դոմինոյի էֆեկտ» ունենալ: Նրանց համար դժվար է պատկերացնել, որ Հայաստանի ինքնիշխանությունը ամենևին չի ենթադրում, թե այն լինելու է եվրոպամետ կամ ամերիկամետ և ընդդեմ Ռուսաստանի:

2019 թ. փետրվարի 26-ին ՀՀ հասարակությունը ականատես եղավ Բաքվում հերթական հակահայկական միջոցառմանը, որի մասնակիցների թվում էին նաև ՌԴ Պետդումայի ռուս-հայկական միջխորհրդարանական հանձնաժողովի անդամները: Այսպես կոչված Խոջալուի իրադարձությունների կապակցությամբ Ռուսաստանից Բաքու էր ժամանել մոտ 20 պատվիրակ, որոնցից 6-ը ՌԴ օրենսդիր մարմնի պատգամավորներ էին (Ի. Ռոդնինա, Օ. Պուշկինա, Դ. Սավելև, Ա. Ժուրավլով, Դ. Պարֆյոնով, Տ. Ցիբիզովա): Նրանք ոչ միայն մասնակցեցին հակահայկական այդ միջոցառմանը, այլև բազմաթիվ հարցազրույցներում հակահայկական որակումներ տվեցին: Նշվեց նաև, որ ՌԴ Պետդումա-

[21] Տե՛ս «Ежегодный прогноз консалтингового агенства. Евразийские стратегии...».

յում ոչ պաշտոնապես ստեղծվել է Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ կապված Ադրբեջանի աջակիցների խումբ[22]:

ՀՀ նոր իշխանությունները անցած տարվա ընթացքում փորձում էին առավելագույնս զուսպ լինել: 2018 թ.-ից հայկական մամուլում գրեթե բացակայում են հակառուսական ուղղվածությամբ հրապարակումները, չքաղաքականացվեցին գազի գնի բարձրացումը, Գյումրիում ՌԴ զինծառայողի կողմից ՀՀ քաղաքացու սպանությունը:

2019 թ. Հայաստանը ՀԱՊԿ-ում և ԵԱՏՄ-ում նախագահող երկիր է: Նա հետևողականորեն փորձում է խորացնել ՌԴ հետ ռազմավարական համագործակցությունը: Այդ մասին են վկայում ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցչի քվեարկումները, Սիրիա մարդասիրական առաքելություն ուղարկելը, 2019 թ. մարտին Վրաստանում «NATO-Georgia Exercise 2019» զորավարժություններին չմասնակցելը: Թվում է՝ Մոսկվան պետք է արդեն համոզվեր, որ իր դաշնակիցը շարունակում է վստահելի գործընկեր մնալ: Ռուս հայտնի քաղաքական վերլուծաբան Ս. Տարասովը, անդրադառնալով ռուս-հայկական հետհեղափոխական հարաբերություններին, նշեց. «Ն. Փաշինյանը չի արել որևէ քայլ, որը կասկածներ կհարուցի Մոսկվայում, որը կանհանգստացնի Մոսկվային»[23]:

Վերջին շրջանում մենք ականատես ենք, որ Ն. Փաշինյանի կառավարության գործունեությունը քննադատող և ռուս-ադրբեջանական բարեկամության ջատագով գործիչներին միացել են նաև Երևանի նկատմամբ նախկինում դրականորեն տրամադրված լրագրողներն ու քաղաքական գործիչները: Ձևավորված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում ռուսաստանյան և հայաստանյան յուրաքանչյուր լրագրողի կամ քաղաքական գործչի ամեն մի անզգույշ արտահայտություն նպաստում է իրավիճակի ապակայունացմանը: Այն հատկապես ցավագին է ընկալվում Հայաստանում, քանի որ մեզ մոտ են գտնվում ռուսական ռազմաբազան, ԱԴԾ սահմանապահ զորքերը, ստեղծվել է միացյալ զորախումբ, համատեղ ՀՕՊ, մենաշնորհներ ունեն Գազպրոմը, Ռոսնեֆտը և «Ռուսական երկաթուղիները»:

ՀՀ նոր իշխանությունները լավ են ըմբռնում, որ երկրի առջև ծառացած մարտահրավերները պետք է հաղթահարվեն սեփական ջանքերով ու նախ և առաջ ռազմավարական դաշնակիցների հետ շահերի համադրման և այդ հարաբերությունները զարգացնելու ճանապարհով: Դա է պահանջում ՀՀ ազգային շահը. Արևմուտքը ցանկանում է, որ Հայաստանը ընտրի Ուկրաինայի ու Վրաստանի ճանապարհը: Սա աղետալի կլինի Հայաստանի համար, իսկ հետևանքները Արևմուտքին հետաքրքիր չեն: Ի տարբերություն այս երկրների, որոնք, բացի տարածքային կորուստներից, հակադրվում են միայն Մոսկվային, Հայաստա-

[22] Տե՛ս «О политическом значении участия депутатов Думы в траурном шествии в Баку» // https://www.kavkaz-uzel.eu/blogs/83772/posts/36733

[23] https://168.am/2019/04/13/1108698.html

նը ձեռք կբերի միանգամից երեք հակառակորդ և կկորցնի երկու ռազմավարական բարեկամական երկիր՝ Ռուսաստան և Իրան: Արևմուտքը փորձում է ոչ միայն արտաքին ճնշումներ իրականացնել, այլև Հայաստանում համախմբել իր կողմնակիցներին՝ հասարակական կարծիք ստեղծելով, թե իբր ՀՀ նոր իշխանության ընդդիմադիրներին աջակցում են Մոսկվայից: Այս ամենը հասկանում են Կրեմլում և Փաշինյանի դեմ պայքարելու փոխարեն ցանկանում են նրա հետ համախմբել ՌԴ-ի հետ համագործակցության կողմնակից բոլոր ուժերին, այդ թվում նաև նախկին իշխանություններին: Այս տեսանկյունից տարածաշրջանում համընկնում են ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ադրբեջանի և Իսրայելի շահերը, իսկ կորցնելով Հայաստանը՝ Ռուսաստանը հասկանում է, որ հանձինս Թուրքիայի և Ադրբեջանի՝ տարածաշրջանում նոր դաշնակիցներ ձեռք չի բերի, որոնք 1920 թ. նման իրենց խնդիրները լուծելուց հետո կրկին քաղաքական առումով կհեռանան Մոսկվայից:

Իր հերթին ՌԴ-ն ստեղծված միջազգային բարդ իրավիճակում բավարար ռեսուրսներ չունի առավել ակտիվ քայլերի դիմելու համար: Ներկայումս յուրովի հավասարակշռություն է ստեղծվել ՌԴ ու գլոբալ ուժային բևեռների և ՌԴ-ԱՊՀ երկրներ փոխհարաբերություններում: Մոսկվայում արդեն հասկացել են, որ իրատեսական չեն գնահատել իրենց դերակատարումը և փոխել են իրենց մարտավարությունը: Ռուսաստանը ներկայումս այնքան ուժեղ չէ, որ մյուսներին պարտադրի իր կամքը, սակայն այնքան ներուժ ունի, որ իր ցանկությանը հակառակ քայլեր չանի: Մոսկվան չի ընդունում, որ իրեն կարող են հրամայել, բայցև նախկինի նման հրամաններ արձակել չի ուզում: Այդ մոտեցումները որոշակի առումով դրսևորվում են Բելառուսի և Հայաստանի հետ հարաբերություններում: Այդ իսկ պատճառով Ռուսաստանի համար լավագույն լուծումը տարածաշրջանում խաղաղության և ստատուս քվոյի պահպանումն է: Մեր կարծիքով՝ այս մոտեցումները ներդաշնակ են ՀՀ շահերին:

Թավշյա հեղափոխությունից հետո ՀՀ նոր իշխանությունները երկրի միջազգային վարկանիշի աճը փորձեցին կապիտալիզացնել Արցախի հարցում: Ռուսաստանը հայտնվել է նոր իրավիճակում, քանի որ հայկական կողմի բարձրացրած հարցերին Բաքուն պատասխանելու պատրաստ չէ, իսկ նրա կողմից իրականացվող ռազմական շանտաժը անարդյունավետ է դարձել: Միաժամանակ հայկական կողմը նշում է, որ հայ-ադրբեջանական պատերազմը կարող է կանխել միայն Ռուսաստանը՝ դրանով իսկ մեծացնելով նրա պատասխանատվությունը: Կրեմլում հասկանում են, որ եթե դա իրենց չհաջողվի, ապա կմիջամտեն ԱՄՆ-ն, Ֆրանսիան, ԵՄ-ն և Իրանը:

Այսպիսով, Հարավային Կովկասում կայուն հավասարակշռություն պահպանելու տեսանկյունից լիովին համընկնում են ՌԴ և ՀՀ շահերը: Հաշվի առնելով 2016 թ. ապրիլի դասերը՝ Մոսկվան ՀՀ թավշյա

հեղափոխության տարեդարձի նախօրյակին հայտարարեց, որ մինչև 2020 թ. սկիզբը Հայաստանին կմատակարարի «Սու 30 ՍՄ» բազմաֆունկցիոնալ կործանիչներ, իսկ 2020-2021 թթ. Հայաստանում տեղակայված իր ավիացիոն ռազմակայանի «ՄԻԳ 29» օդանավերը կփոխարինի 4++ սերնդի 18 միավոր «Սու 30 ՍՄ» կործանիչներով[24]: Հարկ է նկատի ունենալ, որ այս քայլը ունի ոչ միայն ռազմատեխնիկական, այլ նաև ռազմաքաղաքական բնույթ: Հայաստանին մատակարարելով նոր սերնդի ինքնաթիռներ՝ փաստորեն Ռուսաստանը օժանդակում է իր դաշնակցին՝ պաշտպանականից անցնելու հարձակողական ռազմավարության, որն անիրականալի էր առանց նման ավիացիայի: Նշենք նաև, որ այդ կործանիչներից կարելի է արձակել բալիստիկ հրթիռներ, ռադիոէլեկտրոնային պայքար վարել, հակառակորդի ՀՕՊ համակարգերի հայտնաբերման տիրույթից դուրս գտնվելով՝ հակառակորդին հրթիռային հարվածներ հասցնել: Հասկանալի է նաև, որ նոր սերնդի կործանիչներ Հայաստան ուղարկելով՝ Ռուսաստանը փոխում է նաև իր ռազմակայանի գործառական բնույթը:

2019 թ. հոկտեմբերին ՀՀ ՌԴ նախագահ Վ. Պուտինի այցը ևս այդ հավասարակշռությունը պահպանելու և ռուս-հայկական հարաբերությունները զարգացնելու միտումն ունի:

Այսպիսով, արդի աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում որո՞նք են ռուս-հայկական հարաբերությունների հրամայականները.

1. Նկատի ունենալով, որ աշխարհն ավելի փոխկապակցված է դարձել, իսկ հարավկովկասյան տարածաշրջանը բազմաթիվ թելերով կապված է ոչ միայն տարածաշրջանային, այլև համաշխարհային միջպետական, էթնիկ և կրոնական հիմնախնդիրների հետ՝ առավել կանխատեսելի դարձնել ռուս-հայկական ռազմավարական հարաբերությունները:

2. Առանձնացնել այն կարևոր հիմնախնդիրները, որոնք ծագել են ռուս-հայկական հարաբերություններում: Այս տեսանկյունից առկա խնդիրների համակարգումը հնարավորություն կտա ռազմավարական դաշնակիցներին ոչ միայն հստակեցնելու տարածաշրջանային, այլև գլոբալ փոխադարձ շահերն ու նպատակները: Իհարկե, առավել կարևոր խաղացող է ՌԴ-ն, սակայն վերջինս փոխհամագործակցության համար բարենպաստ պայմաններ ստեղծելով կմեծացնի իր վարկը տարածաշրջանում: Պետք է կյանքի կոչել ընդհանուր հիմնախնդիրների համատեղ լուծման գաղափարը և ռուս-հայկական հարաբերությունները կառուցել փոխադարձ շահերի, փոխադարձ պատասխանատվության և փոխադարձ հարգանքի սկզբունքով:

3. Ռուսական և հայկական կողմերը պետք է ակտիվացնեն օրենսդիր, կուսակցական մարմինների, քաղաքացիական հասարակություն-

[24] Տե՛ս «ՌԴ արձագանքը հեղափոխության տարեդարձին. ինչ են ասում կործանիչները». Lragir.am/2019/o4/23/437556

ների, երիտասարդական կազմակերպությունների միջև շփումները: Երկու երկրների հասարակությունները պետք է բավարար տեղեկատվություն ունենան այդ ուղղությամբ իրենց կառավարությունների քայլերի մասին, որը տակտիկական և ռազմավարական առումով էականորեն կնպաստի ռուս-հայկական հարաբերությունների խորացմանը:

4. Ռուսաստանյան և հայկական ԶԼՄ-ում պետք է հակահարված տալ անհարկի և խեղաթյուրված ապատեղեկատվությանը, տարբեր սադրանքներին: Քարոզելով ռուս-հայկական դարեր շարունակ տիրող համագործակցությունը, ռուսաստանյան հասարակությանը ներկայացնել երկու ժողովուրդների շահերի միասնությունը, իսկ հայ հասարակության շրջանում լուսաբանել, որ ՀՀ ազգային ինքնիշխանության ամրապնդման ամենակայուն գրավականներից մեկը ՌԴ-ի հետ հարաբերությունների պահպանումն ու զարգացումն է:

ՀՀ նոր իշխանությունները, ի տարբերություն հետխորհրդային մի շարք երկրների ղեկավարների, հակված չեն իրենց դաշնակից ՌԴ-ին դիտարկել որպես թուլացող պետություն և միջազգային թատերաբեմում նրա արտաքին քաղաքականության որոշ հաջողությունները գնահատել որպես պատահականություն: Երկու երկրների ինքնիշխանության աճը միայն կարող է նպաստել միջազգային ասպարեզում ՌԴ-ի և ՀՀ-ի մրցունակության հետագա ուժեղացմանը: ՌԴ իշխանությունները պետք է ըմբռնումով մոտենան այն բանին, որ Արևմուտքի հետ լարված հարաբերությունների պայմաններում վերջինս շարունակելու է իր փորձերը ՀՀ-ին ներգրավելու ազդեցության իր ոլորտը, և փոխանակ կրավորական դիրք գրավելու և «վտանգավոր սցենարներ» կանխատեսելու՝ ռուս-հայկական հարաբերություններում պետք է ստեղծել այնպիսի գործիքակազմ, որը հնարավորություն կտա արդյունավետ զարգացնելու այն:

Բանալի բառեր – *Ռուսաստան, Հայաստան, ռուս-հայկական հարաբերություններ, Արևմուտք, ԵԱՏՄ, ՀԱՊԿ*

МАРУТ ВАРДАЗАРЯН – ***Современные геополитические процессы и императивы российско-армянских взаимоотношений***. – В статье анализируются особенности современных геополитических процессов и в их контексте новые вызовы, возникшие перед Россией и Арменией. После «бархатной революции» российско-армянские отношения не претерпели существенных изменений, но в отдельных вопросах между двумя странами появилось недопонимание. В его объективных и субъективных причинах необходимо разобраться, тем более что РА в настоящее время председательствует в ОДКБ и ЕАЭС. Как бы то ни было, и в двусторонних контактах, и на международной арене Армения по-прежнему остаётся надёжным партнёром РФ. Новые армянские власти подчёркивают, что вставшие перед страной внешнеполитические вызовы будут преодолены с учётом интересов стратегических союзников.

Ключевые слова: *Россия, Армения, российско-армянские отношения, Запад, ОДКБ, ЕАЭС*

MARUT VARDAZARYAN – ***Current Geopolitical Developments and Imperatives of Bilateral Relations between Armenia and Russia.*** – The article discusses particular features of current developments for Armenia and Russia and the emergence of new challenges in this context. After the Armenian Velvet Revolution, there were no principal changes in Armenia-Russia bilateral relations, however, there was a lack of understanding in regards to some issues. This article examines the objective and subjective reasons for misunderstandings between Armenia and Russia. Currently, Armenia assumes the chairmanship in the CSTO and EAEU and continues to be Russia's reliable ally in both bilateral and international arenas.

Armenian new political leadership highlights within their foreign policy that emerging challenges can be resolved by combining interests and developing relations with their strategic allies.

Key words: *Russia, Armenia, Russian-Armenian realations, West, EAEU, CSTO*

Ներկայացվել է՝ 01.06.2019
Գրախոսվել է՝ 03.09.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019